ԾՈՎԱԿԱԼ ՍԵՐԵԲՐՅԱԿՈՎԸ Ի. Ս. ԻՍԱԿՈՎԻ ԴՆԱՀԱՏՄԱՄԲ

Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սովետական Միության նավատորմի ծովակալ Իսակովն ամենայն իրավամբ համարվում է ռազմածովային նավատորմի պատմության խոշոր մասնագետներից մեկը։ Նրա անվան հետ է կապված ռազմածովային նավատորմի պատմությունն ուսումնասիրող մի շարք պաշտոնական օրգանների, հանձնաժողովների, խմբագրությունների, հեղինակային կոլեկտիվների կազմակերպումը։ Ինքը՝ Իսակովը, միայն կազմակերպիչ կամ խմբագիր չէր։ Նա հանդես էր գալիս նաև որպես հեղինակ, գիտության անխոնջ մշակ՝ բառի ամենախկական իմաստով։ Այդ են վկայում նրա հարուստ անձնական արխիվի հարյուրավոր վավերագրերը, նրա թողած գրական հարուստ ժառանգությունը։

Իսակովի գիտահետազոտական բուռն գործունեության լավագույն էջերից է նրա համառ աշխատանքը՝ վեր հանելու պատմական ճշմարտությունը ռուսական նավատորմի անվանի գործիչներից մեկի՝ հայորդի ծովակալ Լազար Մարկովիչ Սերեբրյակովի մասին։

Կարելի է ենթադրել, որ զբաղվելով Սերեբրյակովի գործունեության ուսումնասիրությամբ, Իսակովը ցանկություն է ունեցել ցույց տալու, որ ինքը միակ ծովակալը չէ հայերից, որ անցյալում ևս հայ ժողովրդի զավակներից շատերն իրենց ընդունակությունները դրսևորել են ռազմածովային գործում։ Այլ կերպ ասած, Իսակովն իր նախորդողներին էր որոնում։ «Ցպետք է մարի և չի կարող մարել այն մարդկանց սուրբ հիշատակը, գրել է Իսակովը, ովքեր իրենց կյանքը զոհաբերեցին հեղափոխության համար, սոցիալիստական Հայրենիքի և ամբողջ մարդկության լուսավոր ապագայի համար։ Բայց հիշելու համար հարկավոր է գիտենալ։ Դրանից բացի, գոյություն ունի նաև հարգանքի ու սիրո պարտք նրանց նկատմամբ... Մեր այդ պարտքը ամենից առաջ պետք է արտահայտվի նրանով, որ հնարավորության չափ ավելի լավ ու շատ ուսումնասիրենք նրանց կյանքն ու գործունեությունը»[1]։

Ահա այդ տեսանկյունով մոտենալով հարցին, Իսակովը առաջինը նկատեց, որ ռազմածովային նախորդ գործիչներից ու հայրենական նավատորմի երախտավորներից Սերեբրյակովը համարյա մոռացության է մատնված, որ նրա ծառայությունների մասին գրեթե չի նշվում ռազմածովային պատմությանը նվիրված գրականության մեջ։

Իսակովն ամենից առաջ դիմել է արխիվային վավերագրերին։ Իր մտերիմ ու բարեխիղճ ընկերներից մեկի՝ գնդապետ Ալիխովի միջոցով Իսակովին հաջողվել է վեր հանել մի քանի տասնյակ վավերագրեր ու արխիվային նյութեր, ինչպես նաև ի մի հավաքել ժամանակի մամուլի էջերում Սերեբրյակովի տպա-

---

[1] *Ա. Մալխասյան, Սովետական բանակի հայ գործիչները, Հայպետհրատ, Երևան, 1963, էջ 6։*

[...]րած այն հոդվածները, որոնք պատկերացում են տալիս նրա պետական ու ռազմական ծառայության և ընդհանուր զարգացման շրջանակների մասին։

Լազր Սերեբրյակովը ծնվել է հայ կաթոլիկ ընտանիքում, 1792 թ.։ 1810 թ. որպես կամավոր նավաստի, ծառայության է անցնում սևծովյան նավատորմում։ Չորս տարի հետո երիտասարդ ծովայինն ընդունվում է այսպես կոչված Գարդեմարինյան դասընթացները, որտեղ սովորողներին շնորհվում էր ծովային սպայի նախնական աստիճան։ Դասընթացներում Սերեբրյակովը դրսևորում է բարձր ընդունակություններ և 1815 թ. հունիսի 23-ին ստանում միչմանի աստիճան։ 1815—1818 թթ. նա ծառայում է սևծովյան նավատորմում, իսկ 1819—1821 թթ. «Արոս» և այլ նավերի վրա մասնակցում է դեպի Թեոդոսիա կատարված ռազմարշավին։ 1820 թ. փետրվարի 20-ին Լազր Մարկովիչին շնորհվում է լեյտենանտի կոչում։ Հաջորդ տարիներին նա երթևեկում է Սև և Ազովի ծովերում լողացող, այդ թվում՝ «Փարիզ», «Իմպերատոր Ֆրանց» նավերի վրա։

1825—1826 թթ. Սերեբրյակովը «Արոս» նավի հրամանատարն էր։ Շուտով նա նշանակվում է վիցե-ծովակալ Մեսսերի համհարզ և հնարավորություն է ստանում ավելի մոտիկից ծանոթանալու ռազմածովային ուժերի ղեկավարման արվեստին, ուսումնասիրելու փորձված ծովայինների գործունեությունը և անհրաժեշտ հմտություն ձեռք բերելու։ 1828 թ. մայիսին Սերեբրյակովը նշանակվում է սևծովյան ռազմածովային նավատորմի գլխավոր շտաբի պետի համհարզ և «Փարիզ» ռազմանավի վրա մասնակցում դեպի Անապա կազմակերպված արշավին։ Այդ ընթացքում ցուցաբերած կարողությունների, դիտելիքների, համարձակության համար Սերեբրյակովին շնորհվում է կապիտան-լեյտենանտի կոչում և նշանակվում ռազմա-ծովային ուժերի գլխավոր շտաբի համհարզ՝ հատուկ հանձնարարությունների գծով։ Դեպի Վառնա կազմակերպված ռազմարշավում աչքի ընկնելու համար նա պարգևատրվում է Սուրբ Վլադիմիրի IV աստիճանի շքանշանով։

1829 թ. Սերեբրյակովը «Պանտելեյմոն» ռազմանավի վրա մասնակցում է Մեսեմվրիայի, Միդիայի, Ինադայի, Կարաբուրունի գրավմանը և ցուցաբերած քաջագործությունների համար պարգևատրվում Սուրբ Աննայի IV աստիճանի շքանշանով։ Սերեբրյակովի քաջությունների և արժանիքների մասին հայտնի են դառնում նաև Պետերբուրգում։ 1829 թ. վերջերին նա Սևաստոպոլից հրավիրվում է մայրաքաղաք, որտեղ շուտով նա ստանում է հատուկ հանձնարարություններ։ Ապա «Կուլմ» և «Իմպերատոր Ալեքսանդր» ռազմանավերի վրա նա Բալթիկ ծովում մասնակցում է մի շարք զորաշարժերի։ Շուտով Սերեբրյակովը փոխադրվում է գվարդիական անձնակազմի նավի վրա՝ նախկին պաշտոնով, այնուհետև գործուղվում է Հյուսիսային ծով, Սև ծով, Դանուբ՝ հատուկ առաջադրանքներ կատարելու։ Մատուցած ծառայությունների համար 1831 թ. Լազր Մարկովիչը պարգևատրվում է Սուրբ Աննայի III աստիճանի շքանշանով։ Սերեբրյակովը կրթված ծովային էր, գերազանց տիրապետում էր թուրքերեն լեզվին, գիտեր գերմաներեն ու ֆրանսերեն։ Պատահական չէ, որ նա 1832 թ. Նիկոլայ I հրամանով Պետերբուրգից մինչև Շտետին է ուղեկցում անգլիական դեսպանին։

1832 թ. նոյեմբերի 1-ին Սերեբրյակովը նշանակվում է գեներալ-լեյտենանտ Մուրավյովի հատուկ խորհրդական։ Այդ ժամանակ Մուրավյովը լայն

լիազորություններով՝ կայսրի կողմից բանակցություններ էր վարում թուրքական սուլթանի և Եգիպտոսի փաշայի հետ։ Այդ առաքելության կատարման համար նա Սևաստոպոլից ուղևորվում է Կոստանդնուպոլիս, իսկ այնտեղից Ալեքսանդրիա և 1833 թ. վերադառնում Պետերբուրգ։ Սերեբրյակովը մասնակցությունն այդ ուղևորությանը և տեղի ունեցած բանակցություններին բավական մեծ նշանակություն է ունենում նրա հետագա պետական-զինվորական գործունեության համար։ 1833 թ., որպես ազնիվ և վստահությամբ օժտված զինվորական, Սերեբրյակովը նշանակվում է ռուսական զորքերի ճամբարի օբեր-գեվալդիգեր (հատուկ գումարների և թանկարժեք նվերների, ունեցվածքի պահպանման տնօրեն)։ Նրա գլխավորությամբ միաժամանակ արտակարգ միջոցներ են իրագործվում խոլերայի համաճարակի դեմ պայքարելու համար։ Ռուսաստանում և Թուրքիայում խոլերայի տարածման դեմ արդյունավետ պայքար մղելու համար Սերեբրյակովը սուլթանի կողմից պարգևատրվում է մեդալով, իսկ Նիկոլայ I նրան շնորհում է երկրորդ կարգի կապիտանի աստիճան։

1834 թ. «Իժոր» ռազմանավի վրա Սերեբրյակովը Պետերբուրգից մինչև Մեմել ուղեկցում է գերմանական փոխարքա Ֆրիդրիխ Վիլհելմին։ Այդ թվականին էլ նա նշանակվում է «Պոլտավա» նավի հրամանատար և երթևեկում Բալթիկ ծովում։ 1835 թ. Սերեբրյակովը պարգևատրվում է Սուրբ Ստանիսլավի III աստիճանի շքանշանով, իսկ 1836 թ., որպես նավախմբի հրամանատար, իրականացնում է զորքերի փոխադրումները Սվեաբորգից Կրոնշտատդ և հակառակ ուղղությամբ, մասնակցում «Պետրոս Մեծ» նավը ծով իջեցնելու հանդիսավոր արարողությանը։

1837 թ. սկզբից Սերեբրյակովը կրկին Կովկասում է, որտեղ ռուսական բանակը լայն գործողություններ էր ծավալում Սև ծովի արևելյան ափերը նվաճելու համար։ Սերեբրյակովը սկզբում նշանակվում է ռուսական կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-լեյտենանտ Վելյամինովի շտաբի հերթապահ։ Ապա նրան է հանձնարարվում լեռնականների դեմ ուղարկվող ծովային ջոկատների առաքումների հսկողությունը։ Ցուցաբերած բացառիկ կազմակերպական կարողությունների համար ապրիլի 18-ին Սերեբրյակովը ստանում է առաջին կարգի կապիտանի կոչում, միաժամանակ, հաշվի առնելով նրա 25-ամյա ծառայությունը ռուսական ռազմածովային նավատորմում, պարգևատրվում Սուրբ Գեորգիևյան IV կարգի շքանշանով։

1838 թ. ռուսական ծովային ու ցամաքային զորքերը գրավում են Սոչի, Տուապսե, Շապսուխ առափնյա բնակավայրերը՝ հաղթահարելով մեծ դժվարություններ և ճակատամարտելով լեռնականների դեմ, որոնց օգնում էին Թուրքիան և Անգլիան։ Այդ մարտերում քաջագործություններով աչքի ընկած Սերեբրյակովին բարձր հրամանատարությունը պարգևատրում է ոսկե սրով՝ «Քաջության համար» մակագրությամբ։ Հոկտեմբերի 3-ին Սերեբրյակովը ստանում է փոխծովակալի կոչում և պարգևատրվում Սուրբ Վլադիմիրի III աստիճանի շքանշանով։

Հաշվի առնելով պետական-ռազմական ու տնտեսական աշխատանքների ասպարեզում Լ. Սերեբրյակովի դրսևորած արտակարգ ընդունակությունները, 1839 թ. ապրիլի 19-ին քառասունյոթամյա փոխ-ծովակալը նշանակվում է Նովորոսիյսկի նավահանգստի պետ։ Միաժամանակ նրան է վստահվում սևծովյան ափերի պաշտպանության առաջին բաժնի պետի պատասխանատու

պաշտոնը։ Այդ ժամանակ Նովորոսիյսկը փաստորեն քաղաք չէր և այնտեղ նավահանգիստ դեռևս գոյություն չուներ։ Մինչև 1850 թ., մոտ 10 տարի, իրեն վստահված պոստում Լազր Մարկովիչը ծավալում է բեղուն և բաղմակողմանի գործունեություն, որով զգալիորեն նպաստում է Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը Սև ծովի արևելյան ափերին։ Շնորհիվ իր վարչական ունակությունների նա կարողանում է ներքին կարգ ու կանոն ստեղծել այդ վայրերի բազմազգ ժողովուրդների մեջ՝ կազմակերպելով մատակարարման, բուժօգնության, հաղորդակցության գործն այն ժամանակվա դժվարին պայմաններում։ Պատահական չէ, որ Սերեբրյակովն այդ տարիներին պարգևատրվում է Սուրբ Ստանիսլավի և Սուրբ Աննայի I աստիճանների, Սուրբ Վլադիմիրի II աստիճանի և Ստիտակ արծիվի շքանշաններով։ Նրան շնորհվում է վիցե-ծովակալի ռազմական բարձր կոչում։

1851 թ., կայսերական հրամանով, Լ. Մ. Սերեբրյակովը նշանակվում է ամբողջ սևծովյան ափերի պաշտպանության պետ։ Դա արտակարգ մեծ վստահություն էր մի հայ ծովակալի նկատմամբ՝ նիկոլևյան միապետության որոշ։ Շուտով Սերեբրյակովի ծառայությունները նշվում են մի նոր բարձր պարգևով՝ «Ալեքսանդր Նևսկու» շքանշանով։

1854 թ., Ղրիմի պատերազմի ծանր պահին, Սերեբրյակովը հմտությամբ իրագործում է սպասնալիքի տակ գտնվող սևծովյան ափերի կայազորների էվակուացիան՝ Նովոտրոիցկիի, Տենդինի, Վելյամինովի, Գոլովինի և Նավագենի շրջաններից։ Նա պարգևատրվում է ոսկե ծխատուփով՝ կայսրի դիմանկարով։

1856 թ. հունվարի 23-ին Սերեբրյակովը նշանակվում է Կայսրության ծովակալության անդամ։ Նրան շնորհվում է ռուսական նավատորմի ծովակալի ռազմական բարձր կոչում, արժանանում է չորս շքանշանների։

Սերեբրյակովը վտխճանվեց 1862 թ. փետրվարի 28-ին՝ յոթանասուն տարեկան հասակում։

XIX դ. երկրորդ կեսին Սերեբրյակովի գործունեության մասին լույս են տեսել մի շարք հոդվածներ ու հաղորդումներ։

Ձեռնամուխ լինելով Սերեբրյակովի կյանքի ու գործունեության ուսումնասիրությանը, Ի. Ս. Իսակովը առաջ քաշեց այն պարզ ճշմարտությունը, որ չի կարելի Սերեբրյակովին անջատել իր շրջապատից ու իր մյուս մարտական ընկերներից, որ հիմք չկա շեղում կատարել, ասենք, Նախիմովի ու Լազրևի նկատմամբ ունեցած մոտեցումից՝ Սերեբրյակովին գնահատելու ժամանակ։ Սակայն կա ավելի վճռական նշանակություն ունեցող հանգամանք, որ իրավունք էր տալիս Իսակովին անհաշտ ու հետևողական դիրք գրավելու Սերեբրյակովի ծառայությունները դրականորեն գնահատելու հարցում։ «Սովետական պատմագրությունը,— գրում է Իսակովը,— մարքսիստական մեթոդոլոգիային համապատասխան, փաստերը, իրադարձությունները և մարդկանց գնահատում է ելնելով պատմական կոնկրետ պայմաններից»[2]։

Իսակովը ցույց է տալիս Սերեբրյակովի եռանդուն գործունեությունը Թուրքիայի դեմ ռուսական բանակի մղած պատերազմներում։ Այդ պատերազմների գլխավոր նպատակն էր Կովկասից դուրս շպրտել անգլիացիներին ու Թուր-

---

2 Տե՛ս ՀՍՍՀ ՀԱՍԴՊԿԱ, Իսակովի անձնական արխիվ, Ակիմովին գրած նամակը 14. 3. 1964 թ.։

քերին, և նա, ով օգնել և նպաստել է այդ պատմական իրադարձությանը, ըստ Իսակովի, «արժանի է մեր շնորհակալությանն, ինչպես ռուսների կողմից, նույնպես նաև տեղական այն բնակիչների և նրանց հետնորդների կողմից, որոնք մնացել էին իրենց հայրենի հողի վրա...»[3]։ Մեթոդոլոգիական այս դիրքերից Իսակովը բնութագրում է Սերեբրյակովի գործունեության առանձին էտապները։

1955 թ. Իսակովը մի շարք նամակներ է ուղարկում ամենատարբեր հասցեներով, նպատակ ունենալով նոր տեղեկություններ քաղել Սերեբրյակովի ազգականների մասին։

Ահա մի քանի տող այդ նամակներից.

«Հարգելի ընկեր։

1853—56 թթ. Ղրիմի («Արևելյան») պատերազմի ժամանակ Կովկասյան ափերի պաշտպանության կազմակերպման գործում զգալի գեր է խաղացել ծովակալ Լազր Մարկովիչ Սերեբրյակովը, որը սևծովյան ափերի պաշտպանության հրամանատարն էր։

Արխիվների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա ռազմական ու վարչական մեծ գործիչ էր, ուներ որոշակի ծառայություններ, որոնք ոչ արդարացի կերպով մոռացության են տրվել մեր պատմաբանների կողմից։

Հավաքված է հարուստ պաշտոնական նյութ՝ սկսած նավատորմում նրա ծառայության սկզբից, սակայն համարյա տեղեկություն չկա նրա ընտանիքի, պատանեկան տարիների և անձական կյանքի մասին։

Ես շատ պարտական կլինեմ Ձեզ, եթե հնարավոր համարեք հայտնել, թե ի՞նչ է Ձեզ հայտնի Լ. Մ. Սերեբրյակովի, նրա ընտանիքի ու սերնդի մասին, օգտագործման համար ներկայացնեք նամակներ, լուսանկարներ կամ ուրիշ վավերագրեր, որոնք կարող են օգնել գրելու նրա կենսագրությունը (բոլոր նյութերը կվերադարձվեն, իսկ հրապարակելու դեպքում կնշվեն աղբյուրները), կամ թե ցույց տաք նրանց ազգանուններն ու հասցեները, որոնք կարող են օգնել նյութեր հայտնաբերելու գործում։

Տեղեկանք— Լ. Մ. Սերեբրյակովը հայ է, ծնվել է Շուշտ կամ Նուխա քաղաքում... վախճանվել է 1862 թ. մարտին։ Լազր Մարկովիչի տղան զոհվել է Սևաստոպոլի պաշտպանության ժամանակ։ .

Պատասխանը խնդրում եմ ուղարկել Մոսկվա Գ—99, Սմոլենսկայա նաբերեժնայա, տ. 5, բն. 120, Իսակով Իվան Ստեփանի։

Շատ երախտապարտ կմնամ օգնության համար։

Պրոֆեսոր Իսակով»[4]։

Երբ Իսակովն իմանում է, որ Նովորոսիյսկի քաղաքային թանգարանում ներկայացված են ծովակալներ Լազրևի և Ռաևսկու նկարները, իսկ քաղաքի հիմնադիր Սերեբրյակովի նկարը չկա, նա ըմբոստանում է դրա դեմ։

Ինչ վերաբերում է Նովորոսիյսկի հիմնադրմանը, ապա այստեղ Իվան Ստեփանիչը անհերքելի փաստերի հիման վրա ապացուցում է, որ քաղաքի հիմնումը ըստ էության կապված է Լ. Մ. Սերեբրյակովի անվան հետ։ Նախ, գրում է Իսակովը,— Յեմսայի ծովախորշի մոտ մինչև 1812 թ. եղել են մի

---

3 ՀՍՍՀ ՀԱՍՇՊԿԱ, Իսակովի անձնական արխիվ։

4 Три письма И. С. Исакова А. И. Алихову от 14.3.1964 г. ЦГАОРСС Арм. ССР, ф. Исакова.

բանի առյուներ, իսկ Սուջուկ-Ղալա ամրոցը թուրքերը քարուքանդ էին արել։ Նա դիմում է «Զինվորական հանրագիտարանին» և մեջբերում կատարում «Նովորոսիյսկ» բառահոդվածից[5]։

Երբ Նիկոլայ I հրամանի համաձայն Մենշիկովը Սերեբրյակովին նշանակում է ծովափնյա պաշտպանության բաժնի պետ, վերջինս 1839 թ. մարտի 5-ին Սանկտ-Պետերբուրգ է ուղարկում հատուկ զեկուցագիր՝ «Նորին մեծության հրամանով, որի մասին ինձ հայտնեց պարոն ռազմական մինիստրը ս. թ. փետրվարի 21-ին իր № 113 գրությամբ, մեկնում եմ որպես Նովորոսիյսկի ամրության և նրա մոտ կառուցվող նավահանգստի պետ»։ Դրանից չորս ամիս հետո, Մենշիկովին գրած զեկուցագրում Սերեբրյակովը հանգամանորեն նկարագրում է այն միջոցառումներն ու կոնկրետ աշխատանքները, որոնք կապված են Նովորոսիյսկ քաղաքի, նրա նավահանգստի, ամրության շրջանների, մատույցներն ապահովող ճանապարհների կառուցման հետ։ Ըստ որում Սերեբրյակովն իր զեկուցագրի վերջում նշում է գրության վայրը և տարեթիվը՝ Ցեմսի ճամբար, 6 հուլիսի 1839 թ.[6]։ Դա ևս ապացուցում է, որ 1839 թ. Նովորոսիյսկ քաղաք և նավահանգիստ չի եղել, այլ գոյություն ուներ միայն ոչ մեծ ճամբար։ Քաղաքը, նավահանգստի և ամրոցների սիստեմը կառուցվել են Սերեբրյակովի ղեկավարությամբ՝ ավելի քան 16 տարի շարունակ։ Նա ակտիվորեն պայքար է կազմակերպել ընդդեմ թուրքական ծովահենության, որի նպատակն էր լեռնային ժողովուրդների հաշվին անդլիացիների միջև ստրկավաճառության միջնորդի դեր կատարել[7]։ «Եթե որևէ մեկը,— այդ առթիվ գրում է Իսակովը,— մյուս «ռեակցիոն» գեներալներից ավելի շատ բան է արել ստրկավաճառությունը և անդլիական դիվերսիան արդելակելու համար, ապա այդ եղել է հենց Սերեբրյակովը»[8]։

Իսակովը մանրամասն նյութեր է ժողովել Սերեբրյակովի մարտական քաջագործությունների, քաղաքացիական արիության, ծովային և ցամաքային զորքերի մարտական գործողությունների համագործակցության կազմակերպման, նրա հմտությունների, Սև ծովի ափերից դեպի Հյուսիսային Կովկաս՝ լեռներով, անտառներով, անանցանելի ճանապարհներով նրա կազմակերպած էքսպեդիցիայի մասին, ինչպես նաև տեղական բնակչության հետ առևտրի կազմակերպման ու նրանց նկատմամբ չափավոր քաղաքականություն վարելու առաջարկներ մշակելու նախագծերի մասին։ Նա զինված ուժը չի համարել միակ միջոց Կովկասը Ռուսաստանին միացնելու գործում։

«Ռուսկի արխիվ» էջերում ժամանակին հրատարակված նյութերը հաստատում են, որ Սերեբրյակովի նախաձեռնությամբ Նովորոսիյսկում դպրոց է բացվել չերկեսների երեխաների համար[9]։ Անկախ այն բանից, թե այդ դպրոցում ի՞նչ առարկաներ են դասավանդվել և ի՞նչ մակարդակով, վերջին հաշվով լուսավորություն, գրագիտություն տարածելը պետք է դիտել որպես դրական երևույթ։

Սովակալ Իսակովը բացահայտում է նաև Սերեբրյակովի անձնական քաջությունն ու խոշոր ծառայությունը Կովկասյան դլխավոր լեռնաշղթայով անց-

5 Տե՛ս «Военная энциклопедия» (1914, т. 17).
6 ЦГА ВМФ СССР; отдел письма д. 209, лл. 26—29.
7 «Морской сборник», 1865 г., № 6 стр.
8 ՀՍՍՀ ՀԱՍԿՊԿԱ, Իսակովի անձնական արխիվ։
9 «Русский архив», кн. 1889, т. 6, стр. 378.

նող մի շարք ճանապարհների և մի շարք վայրերի ու ժողովուրդների կենցաղի նկարագրման գործում։

Ղրիմի պատերազմից երկու տարի առաջ, իմանալով Վրաստան ու Հյուսիսային Կովկաս թափանցելու նպատակով թուրքերի դեպի Սուխում շարժվելու մտադրությունների մասին, Սերեբրյակովն իր սեփական կամքով ու նախաձեռնությամբ՝ ձիով, փոքր ջոկատի ուղեկցությամբ անցնում է Կովկասյան գլխավոր լեռնաշղթան, լինում Թշնամաբար տրամադրված ցեղերի մոտ։ Հասնելով Ցեբելդա, նա արձակում է ուղեկցող 20 կոզակներին, որոնք շատ դժվարությամբ էին առաջ շարժվում, և ինքը շարունակում ուղևորությունը և երկու տեղագիրների միջոցով առաջ է տանում Նախարյան ու Մարուխյան լեռնանցքների տեղագրությունը։ Այնուհետև լինելով նաև Կուրանում, նա հանգամանորեն զեկուցագիր է ներկայացնում ցարին։ Հետագայում Սերեբրյակովը ժողոված նյութերի հիման վրա «Մորսկոյ սբորնիկ» հանդեսում հանդես է գալիս ընդարձակ հոդվածով[10]։ Իսակովն այդ փաստը բնորոշում է հետևյալ կերպ. «Դա իր պարտքի այդքան բարձր գիտակցման և հայրենասիրության հազվագյուտ դեպք է՝ ծովայինը ձիու վրա անցնի ձյունապատ Կովկասյան գլխավոր լեռնաշղթան»[11]։

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Սերեբրյակովը, լինելով գործող բանակում, իր լուրջ ծառայությունների համար ընտրվում է ռուսական աշխարհագրական ընկերության անդամ։ Դա ցույց է տալիս, որ գիտական բարձր շրջաններում Սերեբրյակովը մեծ կուլտուրայի և բազմակողմանի գիտելիքներ ունեցող, զարգացած մարդու համբավ ուներ։

Սերեբրյակովի կերպարի բնորոշման հարցում չափազանց կարևոր է նրա և իր որդու՝ Մարկ Սերեբրյակովի միջև տեղի ունեցած նամակագրությունը Ղրիմի պատերազմի ժամանակ։ Պատերազմի ծանր օրերին կապիտան-լեյտենանտ Սերեբրյակովը ծառայում էր Կերչի շրջանում, առևտրական նավի վրա և անմիջական մասնակցություն չուներ Սևաստոպոլի շրջանում ծավալված մարտական գործողություններում։ Սակայն նա ոգով կովողների շարքում էր և ամեն կերպ ձգտում էր գործող զորամաս փոխադրվել։ 1854 թ. նոյեմբերի 11-ին հորը գրած նամակում նա հետևյալ կերպ է պատճառաբանում իր խնդիրը. «...Մեր ընկերները հազարներով զոհվում են թշնամու կրակից ու ռումբերից, վշտալի է կարդալ բոլոր սարսափների, մեր արիության ու փորձությունների մասին և ներկա ժամանակում նստել Կերչում, ոչինչ չանելով։ Ինչպիսի ելք էլ որ ունենա մեր գործը, միևնույն է ծանր զգացումը ամբողջ կյանքիս ընթացքում կրծելու է իմ խիղճը։ Եթե աստված օգնի մեզ հաղթելու թշնամուն, ապա խիղճս տանջելու է, որ չեմ մասնակցել մեր նավատորմի այդ փառավոր գործերին, իսկ եթե թշնամուն հաջողվի մեր քաջերի դիակների վրայով գրավել Սևաստոպոլը, ապա այդ դեպքում ևս ինձ երբեք չեմ ների, որ այդ ժամանակ ոչինչ չեմ արել, այլ նստել եմ Կերչում։ Խնդրում եմ Ձեզ, իմ բարի հայրիկ, թույլ տալ նավը հանձնել որևէ մեկին, իսկ ինձ մեկնել Սևաստոպոլ։

---

10 «Морской сборник», № 6, 1865 г., «Дорога из Сухуми к Кубани через главный Кавказский хребет».

11 *ՏԼ՚ս ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, Իսակովի անձնական արխիվ, Սերեբրյակովի գործը։*

Եթե դուք ենթադրեք, որ ես այս անում եմ ելնելով փառասիրությունից, որպեսզի ստանամ որևէ խաչ կամ աստիճան, ապա դուք, սիրելի հայրիկ, սխալվում եք. ես միայն ցանկանում եմ մասնակցել այդ գործին և բաժանել իմ ընկերների ճակատագիրը, ուստի աղաչում եմ ձեզ, հայրիկ, չմերժել ինձ»[12]։

Կապիտան Մ. Լ. Սերեբրյակովը շուտով մեկնում է Սևաստոպոլ և հերոսաբար մասնակցում թշնամու դեմ մղվող անհավասար մարտերին։ Իր մարտական գիրքերում էլ, ծանր վիրքեր ստանալով, նա զոհվում է ռուսական ռազմական պատմության այդ ամենափառավոր էջերից մեկում։ Որոշ ժամանակ հայրը տեղյակ չէր որդու մահվան մասին. նա իր պաշտոնական պարտականություններն էր կատարում սևծովյան արևելյան ափերի պաշտպանության կազմակերպման ուղղությամբ։

Հերոս ծովակալ Նախիմովը, որն անսահման հարգում և սիրում էր վիցծովակալ Սերեբրյակովին, խղճի ծանր զգացումով հատուկ նամակ է գրում Լ. Սերեբրյակովին՝ հաղորդելով որդու մահը։ Ահա մի քանի քաղվածքներ այդ նամակից։ «Պարտքի սուրբ զգացման և աղգակը որ ընկած է ամեն մի ռուս մարդու և հատկապես ծովայինի հոգու խորքում, Դուք ոգեշնչել եք նրան (իմա՝ ձեր որդուն— Ա. Հ.) դեպի սխրագործություն, որի համար նրան դեռևս մանկուց ոգևորիչ օրինակ է ծառայել իր հոր գործերը։ Դուք սրբությամբ վստահել եք նրան Ձեր պարտականությունը և նա պատվով է կատարել իր պարտքը։ Նրան, որպես մի այնպիսի ուդայի, որի նմանը հեշտ չէ գտնել Սևաստոպոլում, հանձնարարված էր պատվավոր պաշտոն... հսկել մեր ղորքերին թշնամու անակնկալներից և այդ է եղել նրա ցանկությունը։ Ամեն գիշեր գտնվելով դնդակների հեղեղի տակ, նա ոչ մի բոպե չէր մոռանում իր պարտականության կարեորությունը և տոավոտները կարող էր հպարտությամբ զեկուցել, որ իր և իր ընկերների դիրքությունը իզուր չի անցել, քանի որ այն պահից, ինչ նա նշանակվել է այդ պաշտոնում, թշնամին առաջ չի շարժվել ոչ մի վերշոկ։ Չնայած իր բարձր անձնազոհությանը ոչ մի գնդակ նրան չի կպել, իսկ ամենակարող Աստծու կամքովն է եղել, որպեսզի պատահական նռնակը պատճառ դառնա նրա մահվան, և դիշերվա ժամը 22-ին լույս 23-ին նա զոհվեց»[13]։

Այնուհետև ծովակալ Նախիմովը նկարագրում է, թե որքան վիշտ է պատճառել Մ. Սերեբրյակովի մահը բոլոր սևաստոպոլցիներին, մանավանդ նավաստիներին, և որ ինքն անձամբ ականատես է եղել հարյուրավոր մարդկանց անկեղծ արցունքներին, երբ այդ հերոս կապիտանին հողին էին հանձնում Ուշակովայա Բալկայում։ «Հաղորդելով Ձեզ այդ բոթը,— գրում է Նախիմովը՝ Լ. Սերեբրյակովին,— ես խնդրում եմ հավատալ, որ Ձեզ հետ միասին, մենք, նրա ընկերները բաժանում ենք Ձեր ապրումները։ Հիանալի սպա, հոգու հազվագյուտ արժանիքներով օժտված մարդ, նա եղել է մեր շրջապատի զարդն ու հպարտությունը, և նրա մահը մենք հիշելու ենք, որպես դառը կորուստ՝ անհրաժեշտ Սևաստոպոլի փրկության համար»[14]։

Նամակի վերջում Նախիմովը խնդրում է Սերեբրյակովին թեկուզ և անուղղակի ճանապարհով իրեն տեղյակ պահել, թե ինչո՞վ կարող է գեթ չնչին չափով օգտակար լինել նրա (կապիտան Սերեբրյակովի) դժբախտ այրուն և

12 Նույն տեղում։
13 Նույն տեղում։
14 Նույն տեղում։

ընտանիքին, և վստահություն է հայտնում, որ բարձրագույն հրամանատարությունը երբեք չի մերժի իր միջնորդությունը հանուն Սևաստոպոլի ամենաազնիվ և ամենաարժանավոր պաշտպաններից մեկի ընտանիքին հարկ եղած օգնությունը ցույց տալու համար։

Իսակովի ջանքերով պատմական ճշմարտությունը, թեև շատ մեծ դժվարությամբ, ուղի է հարթել։ Երբ արդեն կենտրոնացվել էր անհրաժեշտ քանակությամբ փաստացի նյութ, Իսակովը ձեռնարկում է մի շարք կոնկրետ միջոցառումներ, որպեսզի ըստ արժանվույն հավերժացնի Սերեբրյակովի հիշատակը։ Ամենից առաջ նա մտադիր էր լուրջ մենագրություն գրել Սերեբրյակովի մասին, որի համար արդեն ստեղծել էր աղբյուրագիտական լուրջ բազա։ Իր նամակներից մեկում՝ հասցեագրված գնդապետ Ալիխովին, Իսակովը գրում է, որ «Երդվում եմ, որ Սերեբրյակովը քիչ ռեակցիոներ է քան Լազրևը, Կորնիլովը, իսկ որոշ դեպքերում կարողանում էր նայել ավելի առաջ, քան թե նրանք»[15]։ Նա ցավով նշում է, որ իր վիճակը մի տեսակ անբարենպաստ է, քանի որ «ես ինքս հայ եմ և անազնիվ մարդիկ վեճը կարող են փոխադրել ուրիշ (ոչ ազնիվ) ուղղությամբ։ Ունեմ տխուր փորձ... Այդ իմարկե կվնասի ոչ թե ինձ, այլ Սերեբրյակովի հիշատակին»[16]։

Իսակովի միջնորդությամբ, սովետական նավատորմի ղեկավարության ջանքերով Սերեբրյակովի աճյունը Կարասու-Բազարից փոխադրվում է Հյուսիսային կողմը, Սևաստոպոլի պատմական գերեզմանատունը, ուր թաղված էր ծովակալի որդին՝ կապիտան Մարկ Սերեբրյակովը։ Այդտեղ էլ կանգնեցվում է համեստ հուշարձան և այդ բոլորը կատարվում է պատշաճ կանոններով՝ Սովետական բանակում ու նավատորմում ընդունված կարգով։

Այսպիսով, շնորհիվ Ի. Ս. Իսակովի ջանքերի, հիմնականում վերականգնվում է պատմական ճշմարտությունը՝ Լ. Մ. Սերեբրյակովի մասին։ Այդ ճշմարտությունն այն է, որ Սերեբրյակովը ռուսական նավատորմում անցել է փայլուն մարտական ուղի՝ շարքային նավաստուց հասնելով մինչև ծովակալի աստիճանը։ Սերեբրյակովը փաստորեն Նովորոսիյսկ քաղաքի հիմնադիրն է։ Նա մեծ ծառայություններ ունի Սև ծովի արևելյան ափերում և ընդհանրապես Կովկասում Ռուսաստանի դիրքերի ամրապնդման և Թուրքիայի տիրապետության կամ ազդեցության լիկվիդացման գործում։ Սերեբրյակովը եղել է հմուտ և քաջ ծովային, շրջահայաց գործիչ և ժամանակի բաղմակողմանիորեն զարգացած անձնավորություններից մեկը։

Սովետական Միության նավատորմի ծովակալ և խոշոր գիտնական Իսակովի ջանքերը՝ վեր հանելու պատմական ճշմարտությունն Սերեբրյակովի մասին, միաժամանակ ցույց են տալիս, հենց իրեն՝ Իսակովի կերպարը որպես մարդու, քաղաքացու և անխոնջ հետազոտողի։

АДМИРАЛ СЕРЕБРЯКОВ В ОЦЕНКЕ И. С. ИСАКОВА

А. О. АРУТЮНЯН

Резюме

Выдающийся полководец и ученый Адмирал Флота Советского Союза И. С. Исаков известен своими многочисленными исследованиями в

15 Նույն տեղում։

16 Նույն տեղում։

области истории русского военно-морского флота. Немало труда он вложил также в исследование личности и заслуг адмирала Лазаря Марковича Серебрякова. Об этом свидетельствует его многочисленная переписка с полковником Алиховым, собранные архивные документы и отдельные черновые наброски о жизни Л. М. Серебрякова.

И. С. Исаков намерен был написать монографию об адмирале Серебрякове, однако тяжелая болезнь и наступившая смерть не позволила завершить задуманное.

Большой интерес прдставляют для нас материалы, собранные И. С. Исаковым о Серебрякове. На основе этих и других материалов удалось восстановить биографию Серебрякова, проследить всю его служебную деятельность и, пользуясь заметками самого И. С. Исакова, дать краткую характеристику роли и места Л. М. Серебрякова в борьбе за укрепление позиций России на Кавказе, в частности, восточного побережья Черного моря, в основании города и порта Новороссийска и в организации Управления Черноморского побережья в середине XIX в.

Исследование жизни и деятельности Л. М. Серебрякова и методологические подходы И. С. Исакова при оценке личности Л. М. Серебрякова безусловно имеют научное и познавательное значение.